«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ ՝Մագդա Մելիքյան

Ղեկավար ՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 Ազգային մշակույթի պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքների կարևորությունը նախադպրոցական հիմնարկներում 4

1.1 Ազգային ծեսը՝ որպես մշակույթի փոխանցման և պահպանման կարևորագույն տարր 5

Գլուխ 2 Մանկավարժ-դաստիարակի կողմից հայ ազգային ծեսերի և տոների մասին տեղեկատվության փոխանցումը և ծիսակարգի իրականացումը 8

2.1 Առաջարկվող տոնացույց և դրա մաս կազմող ծեսերի անցկացման առանձնահատկությունները 8

Եզրակացություն 18

Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Այն տոները՝ որոնք հայ ժողովուրդը նշում էր դեռևս հարյուր տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Տոնակատարությունների ամբողջականությունը զգալիորեն կորուստ է կրել: Մեկ հարյուրամյակ առաջ նշվող տոներն իրենց տևական պատմությունն են ունեցել և նրանց ծիսական բացահայտումն ու վերլուծությունը շերտ առ շերտ ցույց են տալիս ինչպես հայ ժողովրդի անցած ուղին, այնպես էլ հազարամյակների ընթացքի տոմարական փոփոխությունները: Մեր տոների ժողովրդական արարողություններում կարելի է հանդիպել հայոց նախաքրիստոնեական աստվածությունների կերպարներին, քրիստոնեության մուտքին և ընթացքին, քրիստոնեական տոնացույցի «հայացման-ազգայնացմանը» և նախաքրիստոնեական ծեսերի քրիստոնեացմանը:

Քրիստոնեության ընդունումից հետո, ինչպես աշխարհի շատ ժողովուրդների մոտ, հայ ժողովրդի ավանդական տոնացույցը ևս վերածվեց քրիստոնեական աշխարհայացքի՝ համակարգված տոնացույցի կաղապարով և այդ կերպ գոյատևեց ավելի քան մեկուկես հազարամյակ: Հիրավի, այդ երկար ու ձիգ դարերի ընթացքում թե՛ եկեղեցին, թե՛ ժողովուրդը նշել են Ս.Ծնունդ, Տյառնընդառաջ, Ս.Սարգիս, Բարեկենդան, , Ծառզարդար, Զատիկ կամ Ս.Հարություն, Համբարձում, Խաղողօրհնեք կամ Վերափոխում, Ս.Խաչ, Վարդավառ տոները, Կանաչ-կարմիր կիրակիները: Թե՛ եկեղեցին, թե՛ ժողովուրդը նշել են այլ՝ ավել կամ պակաս կարևոր տոներ: Եղել են ոչ համահայկական ընդգրկվածության, զուտ տեղական տոներ, թերևս դրանց մի մասը մոռացվել է, փոխարինվել ուրիշներով:

Կարևոր է գիտակցել, որ մեր օրերում հայ ազգային տոների և ծեսերի խորհուրդը պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ այդ կերպ է միայն հնարավոր պահպանել ազգային մշակույթը և երեխաների մեջ սերմանել այնպիսի արժեքներ՝ ինչպիսիք են հայրենասիրությունը, ազգային ինքնագիտակցությունը, ազգային միասնությունը:

Սույն աշխատանքի նպատակն է ընդգծել նախադպրոցական հիմնարկներում երեխաներին ազգային ծեսերի և տոների խորհրդի մատուցման կարևորությունը և բացահայտել դրանց անցկացման առանձնահատկությունները:

Գլուխ 1

Ազգային մշակույթի պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքների կարևորությունը նախադպրոցական հիմնարկներում

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ավանդույթներ, ծեսեր, տոներ: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները կզարգանային, կփոխվեին հասարակական փոփոխությունների հետ համաքայլ: Դրանք չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու: 21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:[1]

Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով: Եվ այսօր, երբ մենք փորձում ենք ուղղել մեր դպրոցներում և նախակրթարաններում ուսուցման կոպիտ սխալները և մեր կրթությունը աշխարհի առաջնակարգ դպրոցների օրինակով փորձում մոտեցնել ժողովրդական դպրոցին, պիտի գիտակցենք ու սովորենք տեսնել եղած լավագույնը, որովհետև եթե մեկ դար առաջ մենք ունեցել ենք, այսօր կորցրել ենք ամենակարևոր ու պիտանի ձևն ու սկզբունքը: Մանկապարտեզում հատկապես ոչ մի զիջում չի կարելի կատարել: Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին, և թե ինչ կլսի ու կտեսնի, կախված է մեզանից: Երեխայի բաց հոգու աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությունն է, և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին, թևավորում նրա երևակայությունը, ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը՝ ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույները, այսինքն՝ նյութի թե՛ ընտրության և թե՛ մատուցման ձևը պիտի լինի հնարավորին չափ միակը, լավագույնը:

[1] Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում

1.1 Ազգային ծեսը՝ որպես մշակույթի փոխանցման և պահպանման կարևորագույն տարր

Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել: Կազմակերպման այս ձևը ստեղծականության և ինքնադրսևորման լայն հնարավորություն է տալիս: Սանը պետք է երգի ազգային երգ, ունկնդրի ազգային երաժշտություն, խաղա ազգային, ծիսական խաղեր: Նախակրթարանում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական: Նախակրթարանում գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի

- ուշադրությունը,
- հիշողությունը,
- երևակայությունը,
- ստեղծագործելու կարողությունը,
- հաղորդակցման (կոմունիկատիվ) կարողությունը,
- շարժողականությունը,
- ակտիվությունը,
- վարքի կամածինությունը,
- ընկալումը,

- շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը,
- երևույթների մեջ կապ գտնելու կարողությունը,
- ճիշտ կողմնորոշվելու կարողությունը,
- շարժումներին տիրապետելու կարողությունը,
- լսելու կարողությունը,
- դիտելու և կրկնելու կարողությունը,
- ինքնատիրապետումը,
- ինքնուրույն աշխատելու կարողությունը,
- վերլուծելու, համադրելու կարողությունը,
- հարստացնում է բառապաշարը:

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զգացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության տարբեր ձևերը: Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներից են.

- իրավիճակների խաղարկում
- դերախաղ
- խմբային աշխատանք

Այդ խաղերը կարելի է խաղալ ինչպես համապատասխան ծեսի, այնպես էլ ցանկացած ժամանակ՝ անհրաժեշտության դեպքում: Օրինակ՝ եթե կան ընկույզներ, ուրեմն կարելի է խաղալ ընկույզով խաղեր, իսկ տիկնիկներով խաղալու համար պարտադիր չէ սպասել Բարեկենդանին:[2]

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հիբրիտ՝ հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական

[2] Դիպլոմային նախագիծ «Ազգային ծեսը նախակրթարանում»

հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր:[3]

Գլուխ 2

Մանկավարժ-դաստիարակի կողմից հայ ազգային ծեսերի և տոների մասին տեղեկատվության փոխանցումը և ծիսակարգի իրականացումը

[3] Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում

Ծեսի կամ տոնի կազմակերպիչն ու մասնակիցը ոչ միայն մեծերն են՝ դաստիարակ, դայակ, ծնող, տատ ու պապ: Երեխան ինքն էլ իրական տոնի ակտիվ մասնակիցն է, ոչ թե միջոցը: Տոնն էլ բոլորի համար է. հանդիսատեսներ, պասիվ դիտողներ, հյուրեր չկան: Ծնողի, դաստիարակի, դայակի հետ ամբողջական ծեսին մասնակցելով, յուրացնելով ծեսի նյութը, երեխան դառնում է այդ նյութի կրողը, զարգացնողը: Հետագայում նա հեշտությամբ և գիտակցաբար կյուրացնի և՛ իր ժողովրդի, և՛ համաշխարհային գրականությունը, արվեստը, պատմությունը: Այդ նյութը կնպաստի գիտակցաբար գնահատելու ճշմարիտ արժեքները:

Ծեսի իրականացումը, որն իր մեջ ներառում է երգ-պար, բանահյուսություն, գրականություն, կերպարվեստ-ձեռնարվեստ, թատրոն. խաղ, բնագիտություն և այլն, իրական, ամբողջական կրթության իրագործում է: Ծիսական գործունեությունը որոշակի փուլեր է ենթադրում՝

- ծեսի նախապատրաստում
- ծիսակատարություն

2.1 Առաջարկվող տոնացույց և դրա մաս կազմող ծեսերի անցկացման առանձնահատկությունները

Մանուկների համար ստորև առաջարկվող տոնացույցը ընդգրկում է մի շարք, հայտնի հայ ազգային ծեսեր:

Տյառնընդառաջ	Տոնվում է փետրվարի 14-ին:
Բարեկենդան	Տոնվում է Զատիկից յոթ շաբաթ առաջ, կիրակի օրը, կոչվում է Բուն Բարեկենդան:
Մեծ Պաս	Սկսվում է Բուն Բարեկենդանի հաջորդ օրվանից, տևում է յոթ շաբաթ:
Ծառզարդար, Ծաղկազարդ	Տոնվում է Զատիկի նախորդ շաբաթվա կիրակի օրը:
Զատիկ	Տոնում են գարնանային օրահավասարին հաջորդող լուսնի լրման հաջորդ կիրակի օրը: Շարժական ծես է՝ եկեղեցու տոնացուցով հաշված և որոշված օրերով:
Համբարձում	Տոնվում է Զատիկի ծեսից 40 օր անց՝ մոտակա հինգշաբթի օրը:

Վարդավառ	Տոնում են Զատիկից 98 օր հետո, կարող է ընկնել հունիսի 2-րդ կեսից օգոստոսի առաջին կեսը՝ կիրակի օր: Հայաստանի շատ շրջաններում տոնվում է հուլիսի 22-ին հաջորդող կիրակի օրը:

Տյառնընդառաջ կան Տրնդեզ

Երեխաներին այս ծեսի, նրա խորհրդի մասին մանրամասն տեղեկություններ պետք չէ հաղորդել: Պետք է ասել, որ դա հին հայկական տոն է, որի ժամանակ մարդիկ թռել են կրակի վրայով, հավատացել, որ կրակը վառում է բոլոր վատ բաները: Այդ տոնը նվիրվել է նոր ամուսնացած հարս ու փեսային:

Ծեսից երկու-երեք շաբաթ առաջ սկսում են երգերի, առած-ասացվածքների, հանելուկների ուսուցումը և բեմադրումը: Պատրաստվում են ծեսին անհրաժեշտ պարագաները:

Դաստիարակը հանձնարարում է երեխաներին տանեցիներից, մյուս հարազատներից, ծանոթներից օրհնանքներ սովորել: Հաջորդ օրերին երեխաները ասում են իրենց սովորած օրհնանքները, խաղում դրանցով:

Պատրաստում են հարսի ու փեսայի, խնամիների տիկնիկները: Երգեր են սովորում ու բեմադրում: Առած-ասացվածքներով խաղ-բեմականացում են անում:

Ծեսից 1-2 օր առաջ աղանձ են պատրաստում, աղանձի մի մասը սրճաղացով աղում են, փոխինձ են ստանում: Ցախ, ծիսական ճյուղեր են հավաքում, պատրաստում են ժապավենները:

Ծիսակատարության օրը փոխինձը, հալվան երեխաների հետ լցնում են ափսեները և ձևավորում:

Ճյուղերի վրա ժապավեններ են կապում, մտքում պահելով այն, ինչ ուզում են, որ չլինի, այնուհետև այրում ժապավեն կապած ճյուղերը:

Պայմանավորված ժամին նվերներով գալիս են մյուս ծնողներն ու հյուրերը: Նրանք ևս ժապավեններ են կապում ճյուղերին: Ճյուղերը, տիկնիկները և պատրաստված անուշեղենը դուրս են բերում բակ, միասին վառում են խարույկը:

Ընթացքում հնչում են օրհնանքներ, երգեր, պտտվում խարույկի շուրջ և խաղեր խաղում:

Բարեկենդան

Բարեկենդանը հայկական հին տոներից է: Դա հայերի ամենաուրախ տոնն է եղել:

Մինչ ծիսակատարությունը երեխաները, դաստիարակն ու ծնողները պատրաստում են տարբեր դիմակներ:

Պատրաստում են «ուղտ խաղացնելու» համար փայտի վրա ամրացված «ուղտի գլուխ»՝ Բարեկենդանի կարևոր խորհրդանիշներից մեկը: Բացի դրանից պատրաստում են հարսի և փեսայի տիկնիկ, Նոզայի դիմակ, Ակլատիզի տիկնիկ, Ուտիս տատի տիկնիկ:

Դաստիարակը կազմակերպում է փոքրիկ խաղեր, խաղ-ներկայացումներ՝ նշված կերպարներին ծանոթանալու, կերպարների առանձնահատկությունները ընկալելու, ասույթները սովորելու և հասկանալու համար:

Ստացած գիտելիքը կիրառում են բուն ծիսակարգի օրը՝ օգտագործելով նախօրոք պատրաստված դիմակներն ու տիկնիկները:

Մեծ Պաս

Միջենք

Թխում են Մեծ Պասի 4-րդ շաբաթվա չորեքշաբթի օրը:

Ծեսի համար անհրաժեշտ են բաղարջ՝ միջինք կամ կլոճ, պասի ուտելիք: Խոհանոցում թխում են կլոճը՝ գաթայի նման. բաղադրության մեջ մտնում է ալյուր, շաքարավազ, ձեթ, ջուր: Վրան քսում են մեղրաջուր և զարդարում ընկույզով ու չամիչով:

Ծիսակատարության օրը՝ առավոտյան բոլորը միասին թխում են միջինքը: Մեջը դնում են որևէ նշան բախտագուշակության համար:

Դուրս են քշում «Պուպուշիկին», որը հնում համարվել է տան անկյունում թաքնված գանգրահեր փոքրիկ սատանայաճուտ:

Վերցնում են պասի ուտեստները և ամբողջ խմբով ուղևորվում են կանաչազարդ տեղ: Շրջում են, փոքրիկ ճաշկերույթ կազմակերպում, հացկերույթից հետո մաքրում շրջապատը և վերադառնում:

Ծառզարդար-Ծաղկազարդ

Այս տոնին պատրաստվում են երկու շաբաթ առաջ: Այդ ընթացքում երեխաները հեքիաթներ են հորինում ծառերի, գարնան, բույսերի մասին, նկարում են իրենց հորինած հեքիաթները, երգ, առած, հանելուկ են սովորում, ծառ-տիկնիկներ են պատրաստում, փոքրիկ ճյուղերով, բնական այլ նյութերով կոլաժներ են անում, զնգզնգացող, շրխկացող խաղալիք-գործիքներ են պատրաստում, տոնի բոլոր օրերին բակն են մաքրում, ծառ, ծաղիկ տնկում, նախապատրաստում են ծիսական ծառը, զարդարում այն:

Ծեսին նախորդող կիրակի օրը ծնողներից մի քանիսը դաստիարակի և երեխաների հետ կազմակերպում են նախորդ երկու շաբաթների ընթացքում երեխաների ստեղծած գործերի ցուցահանդեսը, գնում են եկեղեցի՝ ուռենու ճյուղերն օրհնելու:

Ծիսակատարության օրը՝ առավոտյան խումբ են բերում ուռենու ճյուղերը, մոմեր, ձվեր, սիսեռ, չամիչ, շաքարի մանրուք: Խոհանոցում պատրաստում են հատիկը: Լցնում են մեծ թասի մեջ և դնում սեղանին: Բոլորը հյուրասիրվում են: Վերցնում են ուռենու ճյուղերն ու միմյանց մեջքին թեթև խփելով՝ ասում.

-Մեջքը տեղը, կամքը տեղը,

-Քամու տեղ, սրտի դեղ:

Երգում են «Խնկի ծառ» երգը:

Զատիկ

Զատկից 25-30 օր առաջ զատկական օրացույց են պատրաստում: Ամեն օրվա համար զատիկ, ճուտիկ, թիթեռ կամ համապատասխան այլ կերպար են փակցնում:

20-25 օր առաջ ափսեների կամ սկուտեղների մեջ բամբակ են փռում, լավ թրջում են, վրան ցորեն, գարի, ոսպ կամ այլ հատիկ են ցանում: Երեխաները հետևում են ածիկի աճին:

Զատկից 30-35 օր առաջ զատկական ապլիկացիաներ են պատրաստում, ձու տիկնիկներ, սովորական թղթերից և ստվարաթղթից տարբեր չափի ձվեր են կտրում, մեջը դատարկված ձվեր են հավաքում: Մինչև Զատիկ դատարկված ձվերը նկարազարդում են:

Տոնից 15-20 օր առաջ ծառի էտած ճյուղ են բերում խմբասենյակ, զարդարում իրենց նախշած ձվերով, պատրաստած կերպարներով:

Ծիսակատարության օրը հնչում է շուրջպարի երաժշտություն՝ «Խնկի ծառ»: Բոլորը մեծ շրջան կազմած, «Գովնդ» են պարում: Մեկը ամբողջ ծեսի ընթացքում զատկածառն է պարեցնում: Պարից հետո բոլորը երգում ու պարում են, խաղում, զատկական ասույթներ ասում:

Համբարձում

Համբարձումը տոնում են Զատկից 40 օր հետո:

Ծիսական օրերին ամեն օր մաքրում են բակը, խնամում բույսերը, բակում ծաղիկներ են ցանում, թփեր են տնկում, վարդատունկ են անում, բակն են նախապատրաստում ծեսին: Ծաղիկը դառնում է աշխատանքի թեմա: Զրուցում են, նկարում են, ծաղկեգլխարկներ, զգեստներ պատրաստում, դրանցով խաղում, հանելուկներ, ասացվածքներ, երգեր սովորում, հեքիաթներ են հորինում ծաղիկների մասին, սափորներ, գրտնակ, զանազան զարդեր հավաքում: Ծնողները անպայման օգնում են:

Տոնը պիտի կատարվի կա՛մ դաշտում, կա՛մ այգում՝ բնության գրկում: Ցանկալի է բոլոր երգերն ու պարեղանակները նախապես ձայնագրված լինեն և երգողների հետ զուգահեռ հնչեն: Հնչում են երգեր, բոլորը շուրջպար են բռնում, երգում են, պարում, խաղեր խաղում:

Վարդավառ

Ծիսակատարությանը նախորդող օրերին թափանցիկ բաժակների մեջ սենյակային բույսերի ճյուղեր են դնում, հետևում դրանց արմատակալմանը: Արմատակալած ճյուղերը տոնին մոտ օրերին տնկում են ծաղկամանների, թաղարների մեջ կամ այգում:

Ուսումնական ճամփորդության են գնում ցորենի արտեր ունեցող որևէ տարածք, ցորենի հասկեր են հավաքում, թելերով կամ այլ նյութերով փոքրիկ աղջիկ-տիկնիկներ են պատրաստում, որոնք ամրացնում են փայտի վրա՝ ծեսի օրը ջուրը գցելու համար: Զուռնայի երաժշտության տակ խաղ-ըմբշամարտ, գոմշակռիվ, աքլորակռիվ են խաղում: Սկսում են երգերի բեմադրումը:

Ծեսն անում են դրսում, այնպիսի վայրում, որ առու կամ այլ ջրավազան լինի: Ծեսը սկսում են խաղիկով, երգում «Վարդավառ» երգը և պարեցնում աղջիկ-տիկնիկները, խաղեր են խաղում, տիկնիկները գցում ջուրը, իսկ ծեսի վերջում ծնողները իրենց երեխաներին օծում են ջրում՝ նրանց ջրի մեջ մտցնելով: Հնչում է ուրախ երաժշտություն, բոլորն իրար են ջրում:[4]

[4] Ծուղրուղու զարգացնող նյութերի ժողովածու 2-6 տարեկանների համար

Եզրակացություն

Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ժողովուրդները հիմնականում տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը:

Ժամանակների փոփոխությունը, ուրբանիզացիան մադրկանց հեռվացրել են ծիսական առօրյայից և հաճախ որոշակի ծեսեր դուրս են գալիս գործածությունից: Ծեսը մարդու կյանքի ամենակարևոր բաղկացուցիչն է և իրենից ենթադրում է դինամիկ զարգացում, այսինքն յուրաքանչյուր սերունդ և յուրաքանչյուր դարաշրջան արտացոլվում է ծիսատոնական արարողակարգերում և դրանից խուսափելով կարող ենք հանգել ծեսի վերացմանը: [5]

Ազգային ինքնաճանաչողության գործընթացը շարունակելու համար, կարևոր եմ համարում նախադպրոցական հիմնարկներում երեխաներին ծանոթացնել ազգային ծեսերին և տոներին, հնարավորինս պարզ և մատչելի ձևով փոխանցել գիտելիքը և ծիսակարգի մաս կազմող խաղիկների, երգ ու պարի միջոցով փոխանցել տվյալ ծեսի խորհուրդը:

Տվյալ աշխատանքի մեջ ներկայացվեցին օրինակներ՝ այս կամ այն ծեսը անցկացնելու եղանակի վերաբերյալ, սակայն տվյալ եղանակները իրենցառանձնահատկությունն երով հանդերձ ամրապնդված չեն և բացառապես առաջարկի տեսքով են ներկայացված: Այդ է պատճառը, որ ըստ կատարված հետազոտության, հանգել եմ այն համոզմունքին, որ յուրաքանչյուր մանկավարժ-դաստիարակ ազատ է ընտրելու իրեն հարմար ֆորմատով ծիսակարգի մատուցման եղանակ: Ցանկալի է առավելագույնս պահպանել ծեսի և տոնի գլխավոր խորհուրդը և արարողակարգը, բայց միևնույն ժամանակ անկաշկանդորեն կիրառել նորամուծություններ՝ համահունչ տվյալ ժամանակաշրջանին:

[5] Սեդա Թևանյանի բլոգ – Ազգային ծեսը որպես կրթական կամուրջ

Օգտագործված գրականության ցանկ

1. Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում
2. Դիպլոմային նախագիծ «Ազգային ծեսը նախակրթարանում»
3. Ծուղրուղու զարգացնող նյութերի ժողովածու 2-6 տարեկանների համար
4. Հայ ազգային ծեսերն ու տոները
5. Սեդա Թևանյանի բլոգ – Ազգային ծեսը որպես կրթական կամուրջ